Ալեքսանդր Շիրվանզադե

Ագռավը և խոզը

Անցյալ շաբաթ ես քիթս բռնելով մտա «Դերեվյանիյ սաբայ»: Այս ու այնտեղ կապած էին մի քանի տնային չորքոտանիներ: Մեջտեղ երևում էին աղբակույտեր, մի բան, որ հատուկ է բոլոր տնային սարայներին: Հանկարծ ինչ տեսնեմ. այդ աղբակույտերից մեկի տակ թաքնված է մի խոզ, մյուսի տակ մի քոսոտ ագռավ: «Ահեղ տեսիլ», գոչում է խոզը... «Արծվի դատաստա՛ն», կչկչում է ագռավը: Շատ վաղուց այդ ագռավի դեմքն ինձ ծանոթ էր: Դա մի անպիտան, հոտած բան էր, որ երբեմն թափառում էր Կասպից ծովի ափերում :

Ամենքը՝ նույնիսկ ագռավները նրանից մի ժամանակ զզվանքով երես էին դարձնում: Հիշում եմ այդ ընդհանուր արհամարհանքի պատճառը: Այդ եղկելի ագռավը մի օր (գոնե այդպես էին պատմում կաչաղակները) գողացել էր մի լեշ և, առանց իր ընկերներին ցույց տալու, թաքուն կլանել էր: Մյուս ագռավները դիմել էին դատաստանի: Դատը պետք է կատարվեր «Դերեվյանիյ սարայում»:

Չեմ հիշում ինչ վճիռ կայացավ, բայց այսօր ես ագռավին տեսնում եմ սարայում: Ես հարցրի, թե նա ինչո՞ւ է «Արծվի դատաստան» կչկչում: Բանից երևաց, որ խեղճ ագռավը իր մանր-մունր հանցանքներից հալածված ցնորվել է և երևակայում է, թև մի օր պետք է իր գլխին հասնի արծվի դատաստանը:

Ես, զզված, հեռացա:

Ավելի զարմանալի էր խոզի վարմունքը, որ գոռում էր՝ «Ահեղ տեսի՛լ»: Խոզ և ահեղ տեսի՛լ: Ես այդ խոզին առաջին անգամն էի տեսնում «Սարայում»:

Բարեկամս, ի՞նչ է պատահել, հարցրի ես, ինչո՞ւ ես «Ահեղ տեսիլ» աղաղակում:

Խոզը, իհարկե, չպատասխանեց. բայց ես, ուրիշներից հարցնելով, տեղեկացա, որ բոլոր խոզերն այժմ երևակայում են, որ ահեղ դատաստանը մոտեցել է: Սարսափից նրանք թաքնվել են աղբակույտերի տակ և վախենում են ապագա ահեղ դատաստանից: